
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՋԱՀԱԿԻՐՆԵՐ
(Միաբանության 200-ամյակի առթիվ)

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱԼ

Եկեղեցական, հասարակական ու մշակութային գործիչ, հայագետ, բնագետ, թարգմանիչ ու մանկավարժ Մխիթար Սեբաստացին (1676–1749) 1701 թ. սեպտեմբերի 8-ին՝ երկար դեզերումներից հետո, Գ. Պոլսում անլուր տառապանքների գնով հիմնել է, հետագայում իր անունով կոչված, Մխիթարյան միաբանությունը:

Հայ ժողովրդի մտավոր մշակութային պատմության հռչակումը նախադեպը չունեցող այդ կառույցի նպատակը հայոց պետության բացակայության պայմաններում հոգևոր, ուսումնական, կրթական, գիտական, թարգմանական, հրատարակչական և մշակութային գործունեություն ծավալելն էր:

1717 թ. հիշյալ միաբանությունը հաստատվել է Եվրոպայի կենտրոնում՝ Վենետիկին մերձ Սուրբ Ղազար կղզում, ուր և գործում է առ այսօր:

Մխիթար Սեբաստացու մահվանից 23 տարի անց՝ 1772-ին, Ստեփանոս Մելգոնյանի (1717–1799) արբահայրության օրերին միաբանության կանոնադրության փոփոխման, ինչպես նաև տարաբնույթ մի շարք խնդիրների կապակցությամբ Մխիթարյան միաբանության անդամների միջև տարաձայնություններ են ծագել: Միաբանների մի խումբ՝ գրող, թարգմանիչ և մշակութային գործիչ Աստվածատուր Բաբիկյանի (1738–1825) գլխավորությամբ, 1773-ի մայիսին հաստատվել է Հյուսիսային Իտալիայում գտնվող Տրիեստ քաղաքում, որը XIV դարում Իտալիայից անցել էր Ավստրիական կայսրությանը և այդ օրերին ազատ նավահանգստի կարգավիճակ ուներ:

Սուրբ Ղազարից հեռացած այդ կաթոլիկ հոգևորականները, թվով 18 անձինք, Տրիեստում գումարում են ժողով և որոշում ստեղծել հոգևոր մի նոր կառույց՝ միաբանություն: Գրավոր դիմում են ազատամիտ գաղափարների ջատագով, մշակութային արժեքները մեծապես կարևորող և գնահատող Ավստրիայի թագուհի Մարիա Թերեզային (1717–1780): Վերջինս, հարգելով հայ եկեղեցականների խնդրանքը, ստեղծվելիք միաբանություն հաստատելու համար նրանց հանձնում է արտոնագիր և ապահովում անհրաժեշտ բոլոր պայմանները: Այսպիսով՝ Եվրոպայում XVIII դարի վերջին, կյանքի ուղեգիր է ստանում գիտամշակութային կրոնական մի նոր կառույց, ինչը հետագա ժամանակներում պիտի դառնար գիտության, կրթության և մշակութային, ակադեմիական չափանիշները լիովին բավարարող հզոր մի հաստատություն: Գ. Լևոնյանի վկայությամբ՝

«Տրիեստում ստեղծվում է հայ կրոնավորների մի միաբանություն, անջատ և անկախ Վենետիկի Սուրբ Ղազարի միաբանությունից»¹:

Հենց Տրիեստում էլ հոգևորականների այդ խումբը առաջին անգամ հայ մատենագրության էջերում իրենց նորաստեղծ միաբանությունը կոչում է անմահ Մխիթար Սեբաստացու անունով՝ Մխիթարյան միաբանություն. «Իբրև պաշտոնական կոչում Վենետիկի մեջ Անտոնյան կամ Բենեդիկտյան, կամ Անտոնյան-Բենեդիկտյան անունները խառն գործածված էին: Թրիեստի ճյուղը կը պարծենա առաջին եղած ըլլա Մխիթարյան միաբանություն (ընդգծումը մերն է – Ա. Փ.) անունը պաշտոնապես գործածելու մեջ»²:

Տրիեստում հաստատվելուց 38 տարի անց՝ 1811 թվականին, Մխիթարյան միաբանները հաստատվում են Վիեննայում՝ հիմնելով Մխիթարյան միաբանության Վիեննայի մասնաճյուղը:

Վիեննայի Մխիթարյան միաբանության ծավալած գործունեությունը մեկնաբանված են ծովածավալ գրականության էջերում՝ մենագրություններ, հոդվածներ, առանձին գլուխներ մենագրություններում, գրախոսություններ, գիտաժողովների նյութեր, հոբելյանական հանդիսություններ, մահախոսականներ, հուշեր, մատենագիտական աշխատություններ, հայ և օտարազգի հայագետների տարաբնույթ կարծիքներ, կենսագրականներ, աշխատությունների առաջաբաններ և այլն: Վիեննայի Մխիթարյան միաբանության գիտակրթական և այլ բնագավառներում ծավալած գործունեությանը նվիրված են մի շարք ուսումնասիրություններ³:

Հաստատվելով Վիեննայում՝ Մխիթարյան միաբանները, բացի զուտ հոգևոր-կրոնական գործունեությունից, ծավալել են պատմաբանասիրական, թարգմանական, ձեռագրագիտական, կրթական, ինչպես նաև բնագիտական երկերի տպագրության բեղմնավոր գործունեություն:

Վիեննայի Մխիթարյան միաբանությունն իր ծաղկուն շրջանն ապրել է XIX դարի երկրորդ կեսից՝ նշանավոր հայագետներ Վ. Չալրիսյանի (1803–1834), Մ. Գարագաշյանի (1818–1908), Հ. Գաթրրճյանի (1820–1882),

¹ Գ. Լ. և ն. յ. ան. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 162:

² Մ. արք. Օրմանեան. Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001, էջ 3561:

³ Ն. Ա. կ. յ. ան. Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա, Վիեննա, 1912, նույնի՝ Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, 338 էջ, Մ. արք. Օրմանեան. Ազգապատում, հ. 2, Էջմիածին, 2001, Հուշարձան. գրական ժողովածու առթիվ 100-ամյա հոբելենի հաստատման Մխիթարյան միաբանության ի Վիեննա (1811–1911), Վիեննա, 1911, 436 էջ: Մ. արք. Օրմանեան. Հայ եկեղեցին և յուր պատմությունը, Կ. Պոլիս, 1912, էջ 86–88: Յ. Տաշեան. Յուզակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, 1891, էջ 7, Լ. և ն. Տրիեստի Մխիթարյանները. – Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 1019–1020, Հ. Ա. և յ. ան. Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 185–191, Օ. Մեքնելեան. Յուզակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանի ի Վիեննա, Վիեննա, 1983, նույնի՝ «Հանդես ամսօրյայի» հոդվածներուն 100 տարվան մատենագիտական ցուցակ, 1887–1987, Վիեննա, 1990, Է. Աղայան. Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 245–315, Գ. Ջահուկյան. Գրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ), Երևան, 1974, էջ 390–443, Վ. Համբարձումյան. Վրթանես Չալրիսյանը և Վիեննական հայրենագիտությունը. – Ուսանող ամսօրյա, 1995, էջ 360–379, Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավարների պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 171–179, Ա. Փաշայան. Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ–ԺԹ դարերում. – Բազմալեզու, 2001, -1-4, էջ 333–350 և այլն:

Ղ. Հովնանյանի (1817–1897), Կ. Մխիթարյանի (1824–1874), Ա. Այտրնյանի (1825–1902), Հ. Տաշյանի (1866–1933), Օ. Մեքուլյանի (ծն. 1921) բեղուն գործունեության շնորհիվ: Հիշյալ հայագետները մեծապես զարգացրել են հայ քննական լեզվաբանությունը, պատմագրությունը, դրամագիտությունը, ձեռագրագիտությունը:

Հիմնադրման օրվանից Վիեննայի Մխիթարյան միաբանության գործունեության մեջ գերակշռել են հայագիտական-բանասիրական լեզվաբանական-թարգմանական աշխատությունները:

Վիեննայի Մխիթարյան միաբանության՝ հայ լեզվաբանությանը նվիրված ուսումնասիրություններից նախ քննարկենք միաբանության բազմաշխատ գործիչներից Արսեն Այտրնյանի աշխարհաբար հայերենին նվիրված ուսումնասիրությունները⁴: Ընդարձակ ներածականում հեղինակն արծարծել է աշխարհաբար հայերենի ձևավորման պատմությունը և որպես գրական լեզու հիմնավորել դրա հաղթանակի անհրաժեշտությունը: Գրքի «Նախաշավիղ» բաժնում քննարկված են տեսական լեզվաբանության հարցեր, ինչպես նաև հայրենագիտության կարևորագույն խնդիրները: Հիշյալ ուսումնասիրություններում Ա. Այտրնյանը տվել է աշխարհաբարի նկարագրությունը՝ պատմական արժեքավոր մեկնաբանություններով: Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, «Հետևելով լեզվի զարգացման էվոլյուցիոնիստական ըմբռնմանը՝ նշանավոր հայրենագետը նոր հայերենի ակունքները որոնում է հենց հին հայերենում, որոնում և գտնում է այն սաղմերը, որոնք աստիճանական ծավալումով ու տարածումով գցում են ետզարարյան հայերենի հիմքերը: VII դարը նա դիտում է իբրև սահմանաբաժան և տալիս է այդ շրջանից տարորոշվող խոսակցական հայերենի՝ «նախնյաց ռամկորենի» ընդհանուր ուրվագիծ: Եվ այսպես հեղինակը իր գրքում քայլ առ քայլ հետևում է հայերենի հետագա զարգացման ընթացքին՝ ընդհուպ մինչև աշխարհաբար գրական լեզվի շրջանը»⁵:

Հարկ է նշել, որ Ա. Այտրնյանի հիշյալ աշխատությունը դարձել է արևմտահայ գրական լեզվի նկարագրության լավագույն օրինակը, որն այդ իմաստով էապես տարբերվում է արևմտահայ քերականությանը նվիրված նախորդ ուսումնասիրություններից⁶:

Քննարկելով XIX դարի կեսերին Վիեննայի Մխիթարյան միաբանության ծավալած բանասիրական գործունեությունը, Է. Ադայանը նշում է. «1840-ական թվականներից սկսած լույս տեսան այնպիսի աշխատություններ, որոնցից մի քանիսը այսօր էլ մնում են իբրև չգերազանցված ուսումնասիրություններ (օրինակ՝ Այտրնյանի քերականությունը)»⁷:

Հայ լեզվաբանության պատմության էջերում իր ուրույն տեղն ունեն Վիեննայի Մխիթարյան միաբանության վաղամեռիկ անդամ Վրթանես Չալրիսյանի (1803–1834)՝ աշխատությունները: 1827 թ. Վիեննայում լույս

⁴ Ա. Այտրնյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:

⁵ Հ. Պետրոսյան. Հայրենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 31:

⁶ Ն. Ռուսինեան. Ուղղախոսություն արդի հայոց լեզվին, Կ. Պոլիս, 1853, Մ. Քիեճեան, Հայերեն քերականություն աշխարհաբար լեզուի, Կ. Պոլիս, 1864:

⁷ Է. Ադայան. նշվ. աշխ., հ. 1, էջ 245:

է տեսել 24-ամյա Վ. Չալրիսյանի «Քերականություն հայկազյան լեզվի» դասագիրքը: 1885-ին հեղինակի մահվանից հետո այն Ա. Այտրնյանի աշխատասիրությամբ վերամշակվել և լույս է տեսել դարձյալ Վիեննայում:

Վ. Չալրիսյանի հիշատակված դասագիրքն իր ժամանակին ճանաչվել է որպես հայերենի լավագույն քերականություն, քանզի դրանում քննարկված են ասորաբան և հունաբան առանձնացված ձևերը: Գրաբարի՝ և՛ հայերեն, և՛ օտարալեզու քերականության աշխատությունների հեղինակներ Ս. Մալխասյանը, Ս. Աբեղյանը և Ա. Մեյեն հիմնականում հիմք են ընդունել Վ. Չալրիսյանի դասագիրքը:

Վ. Չալրիսյանի հիշյալ քերականությունն իր ժամանակին բազմիցս վերահրատարակվել է: Ինչպես վկայում է Վ. Համբարձումյանը, «Տպագրվել է ոչ թե ինը, ինչպես լայնորեն և հաջորդաբար նշվում է բանասիրության և լեզվաբանության մեջ, այլ տասնմեկ անգամ, այն էլ ոչ միմյանցից հեռու ընկած տարիների ընթացքում: Չալրիսյանի տեսական և գործնական քերականությունները հայերեն սովորողների մեջ մտցրել են ճաշակ հայոց լեզվի մաքրության, գրական նորմավորվածության, ինչպես նաև գրաբար ընտիր բնագրերի վերաբերյալ»⁸:

Հնդեվրոպական լեզվաբանության հարցերին է նվիրված միաբանության անդամ Ս. Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզուն» կոթողային աշխատությունը⁹, ինչը հիշյալ թեմային նվիրված ցարդ չգերազանցված ուսումնասիրություն է: «Աննկարագրելի եղավ իմ ուրախությունը, երբ ձեռք բերի այդ գիրքը, – գրել է Հ. Աճառյանը:– Սկսեցի կարդալ անհագուրդ: Մովորեցի ինչ-որ ավանդված է այնտեղ: Հնդեվրոպական լեզվաբանության մասին արդեն ամբողջական գաղափար կազմեցի: Ինչպես օտարներն էլ վկայում են՝ Տերվիշյանի այդ գիրքը իր նմանը չունի եվրոպական լեզվաբանական գրականության մեջ: Մեկ-երկու հարյուր էջերի մեջ տալ հնդեվրոպական լեզվաբանության ամփոփումը, նրա ծագումը և պատմությունը, հնդեվրոպացիների քաղաքակրթության պատմությունը, նախալեզվի արմատները և նրանցից ծագած հայ և օտար բառերը, քերականությունը մեծ գործ էր: Այսօր էլ Եվրոպացիք նմանօրինակ աշխատություն չունեն: Նույնիսկ Meringer-ի գրքույկը չի հասնում նրան»¹⁰:

Ս. Տերվիշյանը Կ. Պոլսում 1887-ին հիմնադրել է «Լեզու»՝ հայ իրականության մեջ լեզվաբանական առաջին պարբերականը, որի էջերում տպագրված հոդվածները լավագույնս մեկնաբանել են հայ և համաշխարհային լեզվաբանության խնդիրները: Մեկ տարվա կյանք ունեցող այս հանդեսի մասին Խորհրդային Հայաստանում 1950-ականներին հրապարակվեցին տարբեր կարծիքներ, որոնք այսօր ունեն սուսկ պատմական արժեք¹¹:

⁸ Վ. Համբարձումյան. Մխիթարյանների լեզվամշակման սկզբունքները. – Բազմավեկ, 2001, -1-4, էջ 197:

⁹ Ս. Տերվիշյան. Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս 1885:

¹⁰ Հ. Աճառյան. Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 104-105:

¹¹ Տե՛ս Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 245, Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիա (1794-1900), կազմեց Հ. Պետրոսյանը, Երևան, 1956, էջ 513:

Հայ լեզվաբանության պատմության էջերում Վիեննայի Մխիթարյանները առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեցին «Դասական հայերեն» արտահայտությունը: Հայագետներից ոմանց կարծիքով մաշտոցյան գրերի գյուտից մինչև V դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում հայ պատմիչների, ինչպես նաև թարգմանիչների լեզուն իր մի շարք առանձնահատկություններով տարբերվում է հետագա շրջանի գրաբարից, որն անվանվեց ոչ դասական գրաբար:

Վիեննայի Մխիթարյան միաբանության գիտական հետազոտությունների հոլովությունում ծանրակշիռ ու տարողունակ է նրանց նպաստը պատմագրության բնագավառում:

Նախ անդրադառնանք միաբանության անդամների մենագրություններին և ապա՝ թարգմանական գրականությանը:

1849 և 1852 թվականներին Վիեննայում լույս են տեսել Հ. Գաթրըճյանի համաշխարհային պատմությանը նվիրված երկու հատորները¹²:

Ինչպես տեղեկանում ենք տիտղոսաթերթից, նշված գրքի երկու շքեղակազմ և ստվար հատորները տպագրվել են Կ. Պոլսի նշանավոր Տատյան տոհմի շառավիղներից մեկի՝ Հ. Տատյանի¹³ հովանավորությամբ:

Մինչև Հ. Գաթրըճյանի վերը հիշատակված երկհատորյակի լույս տեսնելը, հայ իրականության մեջ համաշխարհային պատմությանը նվիրված մայրենի լեզվով նմանատիպ ծավալով որևէ ուսումնասիրություն չի հրատարակվել: Մեծ հայագետը ծրագրել էր հիշյալ գործը հրատարակել հինգ հատորով:

Հ. Գաթրըճյանը պատմական իրադարձությունները հասցրել է մինչև 480 թվականը: Նախաբանում նա իր աշխատությունը ծրագրել էր ներկայացնել երեք շրջանով՝ հին, միջին և նոր: Հին շրջանը ներառել է աշխարհի ստեղծումից մինչև Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը, այն է՝ մինչև 480 թվականը: Միջին շրջանը ընդգրկելու էր մինչև Ամերիկայի հայտնագործումը՝ 1492 թվականը: Եվ վերջապես նորը՝ Ամերիկայի հայտնագործումից հետո ընկած ժամանակաշրջանը:

«Տիեզերական պատմության» երկու հատորներում, համաշխարհային պատմության շարադրանքին զուգընթաց, հեղինակը համառոտակի ներկայացրել է նաև Հայաստանի պատմության մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես քննարկված են հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, ինչպես նաև նախաքրիստոնեական շրջանի տարաբնույթ հարցեր: Հիշյալ հարցերը քննարկելիս, Հ. Գաթրըճյանը հիմնականում կրկնել է Մ. Չամչյանի պատմության¹⁴ էջերում ներկայացված դրույթները:

¹² Յ. Գ ա թ ը ը ճ է ա ն. Տիեզերական պատմություն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս, ի խնդրոյ քաջանուն և հոյակապ իշխանի Յովհաննու Ամիրայի Տատեանց և նորին ծախիւք դրոշմեայ, ի Վիեննա, հ. Ա, 1849, 620 էջ, հ. 2, 1852, 608 էջ:

¹³ Հովհաննես Բեյ Տատյան (1789–1869) – 1842-ին ստանձնել է Օսմանյան կայսրության արքունի վառոդապետի պաշտոնը, 1844-ին կառուցել Կ. Պոլսի Մաքրիգյուղի հայկական եկեղեցին:

¹⁴ Մ. Չ ա մ չ է ա ն. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1784–1786:

Հ. Գաթրըճյանի՝ «Տիեզերական պատմությանը» տրված գնահատականներից բերենք միայն Ն. Ակինյանի կարծիքը. «Հ. Գաթրըճյանի «Տիեզերական պատմությունը (հատ. Ա-Բ, 1849–1852) եղաւ առաջինը, որ դարուն գիտութեան պահանջքի համաձայն՝ առաւ ի բաց ասանդական քողն, եւ ներկայացուց պատմութիւնը իւր սեպհական երանգներով»¹⁵:

1856–1860 թվականներին Վիեննայում լույս են տեսել Ղ. Հովնանյանի «Պատմութիւն քաղաքականութեան Եվրոպական տերութեանց ընդհանրապէս» հիմնարար աշխատության չորս հատորները, որը Եվրոպայի քաղաքական պատմությանը նվիրված հայատառ առաջին ուսումնասիրությունն է նման ծավալուն ընդգրկմամբ:

Ղ. Հովնանյանը անդրադարձել է նաև ականավոր դիվանագետ, ազնվականի տիտղոսի արժանացած և մեծ բարերար Մանուկ Բեյի (Միրզայան Մանուկ Մարտիրոսի (1769–1817) փոթորկահույզ կյանքին և գործունեությանը¹⁶:

Ուշագրավ է Ղ. Հովնանյանի՝ Ներսես Ա Մեծին նվիրված ուսումնասիրությունը¹⁷, որի էջերում կան մինչ այժմ դեռևս վիճելի շատ ու շատ հարցեր:

Հայ ժողովրդի ամբողջական պատմությանն է նվիրված Ե. Չազրճյանի մենագրությունը, որն արժանացել է երկրորդ տպագրությանը նս¹⁸:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակած Տրդատ Գ Արշակունու կյանքի վերջին ժամանակահատվածին է նվիրված Կ. Միսիլյանի ուսումնասիրություններից մեկը¹⁹:

Ա. Պալճյանն իր ուսումնասիրություններից մեկում հանգամանալից անդրադարձել է Հայաստանում կաթողիկական վարդապետության տարաբնույթ խնդիրներին²⁰:

Սեղմ գծերով անդրադառնանք պատմագրության ոլորտում Վիեննայի Միխթարյանների թարգմանական գործունեությանը:

Ժամանակագրական առումով նախ ներկայացնենք ֆրանսիացի պատմաբան, եպիսկոպոս Բոսյունի՝ համաշխարհային պատմությանը նվիրված ծավալուն ուսումնասիրությանը²¹: Ֆրանսերեն բնագրից գրաբար թարգմանությունն իրականացրել են Հ. Գաթրըճյանը, Ղ. Հովնանյանը և Վիեննայի Միխթարյան միաբանության երբեմնի անդամ Ա. Գարագաշյանը: Այս թարգմանությունը հայերենագիտության համար բացառիկ արժեք է ներկայացնում: Խնդիրն այն է, որ այն V դարի հայ թարգմանիչների

¹⁵ Ն. Ակինյանի և Ն. Ակինյանի մը Վիեննական Միխթարյան միաբանության գրական գործունեության վրա, Վիեննա, 1912, էջ 33:

¹⁶ Ղ. Հովնանյանի և Ն. Ակինյանի մը Միրզայան Մանուկ Պեյի վարուց պատմությունը, Վիեննա, 1852, 93 էջ:

¹⁷ Ղ. Հովնանյանի և Ն. Ակինյանի մը Ներսես Ա Մեծի և Հայաստանի վերայ ունեցած ազդեցությունը, Վիեննա, 1851:

¹⁸ Ե. Չազրճյանի մը Պատմություն հայոց Հայկազյանց տերության սկսելէն մինչև մեր ժամանակը, Վիեննա, 1851, 483 էջ, նոյն ինչ՝ Բ տպագրություն, Վիեննա, 1872, 422 էջ:

¹⁹ Կ. Միսիլյանի մը Տրդատայ առանձնապար, վերջին օրերն ու մեռնիլը, Վիեննա, 1851, 51 էջ:

²⁰ Ա. Պալճյանի մը Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա, Վիեննա, 1878, 333 էջ:

²¹ Բոսյունի մը Մեղդաց եպիսկոպոսի Խօսք վասն տիեզերական պատմութեան: Թարգմանեալ յաշակերտաց Միխթարայ Մեծի Աբբայի, Վիեննա, 1841, 513 էջ:

«ոսկեդարյան», կամ, ինչպես ընդունված է, դասական գրաբարի վերակենդանացման յուրօրինակ մի փառահեղ նմուշ է:

Վիեննայի Մխիթարյան միաբանության՝ պատմագրությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ ուշագրավ է գերմանացի հայագետ Հ. Գելցերի (1847–1906)՝ հայ ժողովրդի պատմությանը նվիրված աշխատության²² հայերեն թարգմանության իրողությունը: Թարգմանությունն իրականացրել է Գ. Գալեմբյարյանը:

Գելցերի պատմությունը ընդգրկում է Հայոց պատմությունը սկզբից մինչև XIX դարի վերջերը: Գրքի վերջին շուրջ քառասուն էջերը թարգմանչի արժեքավոր հավելվածն է: Այսպես, գրքի 95–104 էջերում տրված է 1895–1897 թթ. հայոց կոտորածներին նվիրված գրքերի ցանկը: Շուրջ 90-ի հասնող այդ աշխատությունների հեղինակների մեծ մասը ֆրանսիացի, անգլիացի և գերմանացի հայագետներ են: Եվ վերջապես, Գելցերի պատմության վերջին՝ 105–125 էջերը նվիրված են Հայոց կաթողիկոսների և պատրիարքների անվանացանկին:

Հայերեն ձեռագրերի, գրքերի ու պարբերականների պահպանման կենտրոն հանդիսացող Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանը հիմնվել է 1811 թվականին:

Մեծագույն գովեստով պետք է արձանագրել Վիեննայի Մխիթարյանների ծավալած այն շնորհակալ ու տառապագին աշխատանքը, որ նրանք կատարել են հայկական ձեռագրերը և հայերեն հնաստիպ մեծ քանակությամբ տարաբնույթ գրականությունը, ինչպես նաև պարբերական մամուլը Թուրքիայից և այլ երկրներից հավաքելու ու պահպանելու գործում: Հայագիտությունը, հիրավի, Վիեննայի Մխիթարյաններին է պարտական հայերեն մեծ թվով ձեռագրերի հավաքման և կորստից փրկելու ազգանվեր գործունեության համար: Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում առկա են հայ պարբերական մամուլի հազվագյուտ օրինակներ:

Հիշյալ մատենադարանի դերը և գործառույթի ոլորտները մեծացել են, ինչպես նաև հավաքածուները հարստացել են հիմնականում XIX դարի երկրորդ կեսին, երբ միաբանությունն արդեն կայացել էր և դարձել ուսումնական ու հայագիտական խոշոր կենտրոն: Դրա լավագույն առհավատյան մատենադարանում պահպանվող շուրջ 2600 ձեռագրերն են: Դրանց թվում կան այնպիսի հազվագյուտները, ինչպիսիք են Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի և այլոց ձեռքով նկարագարոված խիստ արժեքավոր ու հայ մանրանկարչության պատմության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ձեռագիր մատյանները:

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահպանվող հայերեն ձեռագրերի անդրանիկ ցուցակը կազմել է իաբանության բազմաշխատ անդամ, լեզվաբան, բանասեր և հմուտ ձեռագրագետ Հակոբոս Տաշյանը: 1895 թ. Վիեննայում նրա լույս ընծայած ձեռագրացուցակը հայ քաղաքակրթությանը, պատմությանը և այլ ցերի վերաբերյալ 573

²² Հ. Գ է լ ց է ր. Համառոտ պատմություն Հայոց, յաւելուածքովք թարգմանչին, Վիեննա, 1897, 133 էջ:

ձեռագրերի աննախադեպ մեծ վարպետությամբ կատարված նկարագրությունն է²³:

1963 թ. Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան, բանասեր և ձեռագրագետ Համագասպ Ոսկյանը (1895–1968) Վիեննայում հրատարակել է մի ձեռագրացուցակ, ինչը Հ. Տաշյանի՝ վերը հիշատակված ձեռագրացուցակի շարունակությունն է²⁴:

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրերի ցուցակների՝ Տաշյանի սկզբնավորած գործը վերջակետել է միաբանության մեկ ուրիշ անդամ, բնագրագետ, տոմարագետ, դրամագետ և խմբագիր Օգոստինոս Մեքուլյանը²⁵:

Հիշյալ մատենադարանի հայերեն գրքերի և պարբերականների թիվը շուրջ 150 հազար է, իսկ հայագիտությանն ու արևելագիտությանը նվիրվածը՝ շուրջ 10 հազար: Մատենադարանի գրքային հավաքածուն պարբերաբար համալրվում է Հայաստանից, ինչպես նաև սփյուռքի գաղթավայրերից ստացվող հրատարակություններով: Այն մշտական սերտ համագործակցության մեջ է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, ինչպես նաև մեր հանրապետության գիտակրթական այլ հաստատությունների ու գրադարանների հետ:

1775 թ. մայիսի 30-ին կայսերական արտոնագրով Տրիեստի Մխիթարյաններին թույլ է տրվել բացելու հայ և «հռոմ» տառերով մի տպարան: Գ. Լևոնյանի վկայմամբ՝ «Մեկ տարի անց արդեն գոյություն ունեւ այդ տպարանը, որտեղից լույս է տեսնում առաջին հրատարակությունը, որ կոչվում է «Յորդորակ առ պաշտոնասիրություն Մուրբ Աստվածածնի»: 1795 թվին այդ տպարանն ունեւ 47 տեսակ տառ (24-ը լատիներեն, 7-ը գերմաներեն, 15-ը հայերեն և նոր հունարեն): Մինչև դարեվերջը, XIX դարի սկիզբները այնտեղ տպագրվում են 30-ի չափ մեծ մասամբ կրոնական գրքեր»²⁶:

Հիշյալ տպարանում տպվել են նաև հայատառ թուրքերեն գրքույկներ: Տրիեստի միաբանությունն իրենց տպագրած գրքերի վրա դրոշմել են չորս տառեր. «Ո. Կ. Վ. Ա.», ինչը մեկնաբանվում է՝ «Որդեգիրք կուսին վարդապետք ապաշխարութեան»:

1811 թ., ինչպես նշվեց, Մխիթարյան միաբանները տեղափոխվել են Վիեննա, ուր նրանց առաջին ձեռնարկումը Տրիեստից մեծ դժվարություններով բերված տառերով և երկու փայտյա մամուլով տպարանի հաստատումն էր: Այս գործում անուրանալի ավանդ ունի Վիեննայի Մխիթարյան միաբանության երկրորդ արբահայր Արիստակես Ազարյանը (1782–1855): Նրա անմիջական նախաձեռնությամբ Վիեննայում բարելավվել է գրահրատարակչական գործը. «Արիստակես Ազարյանի օրով Վիեննայի վանքը շատ ծաղկեցավ: Արբահայրը հոգ տարավ վանականներու թիվը շատացնելու,

²³ Յ. Տ ա շ յ ա ն. Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա:

²⁴ Հ. Ո ս կ ե ա ն. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա:

²⁵ Օ. Մ ե թ ու լ ե ա ն. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա:

²⁶ Գ. Լ. և ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 162:

նյութական դրությունը բարձրացնելու: Նոր վանքը շինեց (1838), բացավ դպրոց, հիմնադրավ հրատարակչական ընկերության»²⁷: Ա. Ազարյանի օրոք միաբանության տպարանը «Այն աստիճան է կարգավորվել, որ 1838 թվականին հնարավոր էր դարձել «Որ օրհնես զայնոսիկ» աղոթքը տպագրել 25 լեզվով: Նա է հիմնադրել Վիեննայի վանքում դրամագիտության բաժին, որ հետագայում շարունակեց Կոնստանտինոպոլիսի Միսիյանները»²⁸:

Հետագա տարիներին Վիեննայի Մխիթարյան տպարանն «Այնքան է զարգանում և այնքան բարձրացնում իր արտադրությունների որակը, որ ավստրիական կառավարությունը և պաշտոնական որոշ հիմնարկներ տպագրական գործեր տպագրել են տալիս այդ տպարանին»²⁹: Հարկ է նշել, որ տպարանը բազմալեզվյան է: Հայերեն տպագրությունները դրա տպագրության ընդհանուր ծավալի միայն 20–30 տոկոսն են:

Վիեննայի Մխիթարյանների տպագրությունը նրանց եկամտի հիմնական աղբյուրներից մեկն է եղել: Այդ եկամտով նրանք հնարավորություն են ունեցել հոգալու իրենց դպրոցների ծախսերը, հրատարակելու հայ մատենագրերի ու եվրոպական լեզուներից, ինչպես նաև հին հունարենից և լատիներենից կատարած տարաբնույթ թարգմանություններ:

1837-ին հիշյալ տպարանում բացվել է տառաձուլարան: Հայ տպագրության պատմության էջերում այդ օրերին արձանագրվել է պատմական կարևոր մի իրողություն: Իրականացվել է հայկական գաղթավայրերին անհրաժեշտ տառաձուլման պատվերներ, հիմնականում, այսպես կոչված, «վիեննական» տառատեսակներով: Եթե 1795 թ. տպարանն ունեցել է 47 տեսակ տառ, ապա 1893-ին այն հասել է 50-ի, այդ թվում՝ չինարեն, ճապոներեն, հնդկերեն և այլն: Տպարանում գրքերից բացի տպագրվել են նաև հունգարական թղթադրամներ, Գեորգի Դիմիտրովի (1982–1949) հակաֆաշիստական թռուցիկներն ու գրականությունը:

Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ակինյանի վկայությամբ՝ «Այսօր Մխիթարյան տպարանը հայերեն գրերու բազմազանությամբ (70 տեսակ) աշխարհիս մեջ հարստագույնը կնկատվի: Ապա նաև հայ բոլոր տպարանները՝ Տաճկաստան, Ռուսաստան, Գաղիա, Չվիցերիա, Անգլիա, Ամերիկա և այլն և Եվրոպայի բազմալեզվյան տպարաններն հյուրընկալեցին Մխիթարյան տպարանի գրերը»³⁰: Ամեննին չափազանցություն չկա այս տողերում, քանզի, ինչպես վկայում է հայ գրքի և տպագրության քաջագիտակ Գարեգին Լևոնյանը, «1906 թվին և 1913 թվին Ավստրիայի մայրաքաղաքում մեր եղած միջոցներին քանիցս այցելել ենք այդ հոյակապ հաստատությունը, անձամբ համոզվել, որ իրոք նա իր մեծությամբ և հարստությամբ հայկական տպարանների մեջ առաջինն է և անմրցակից»³¹:

²⁷ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 187-188:

²⁸ Գ. Մ տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան, հ. 1, Երևան, 1973, էջ 34-35:

²⁹ Գ. Լ և ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 201:

³⁰ Ն. Ա կ ի ն յ ա ն. Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա:

³¹ Գ. Լ և ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 206:

Անանց է Մխիթարյանների նպաստը հայ պարբերականների հրատարակման բնագավառում: Վիեննայում հաստատվելուց ութ տարի անց, 1819 թվականին նրանց դրոշմով լույս է տեսել հայ առաջին պարբերականներից մեկը՝ «Ծանօթութիւնք վաճառականութեան» շաբաթաթերթը: Այն նպատակ է ունեցել «Տեղեկատու հանդիսանալ առևտրականների համար ընթացիկ վաճառականության բնագավառում, որը սակայն, քաջալերության չի արժանացել և առաջին համարից հետո դադարել է»³²:

1847 թ. Վիեննայի Մխիթարյանները Կ. Պոլսի մեծահարուստ բարերար Տուզյան Չելերու հորդորանքով հրատարակում են «Եվրոպա» խորագրով քաղաքական և ուսումնական շաբաթաթերթը, ինչը 1858-ից դառնում է «Օրագիր ընտանեկան»: Լույս է տեսել 1847–1863 թվականներին: Հիմնականում քննարկել է արևմտահայ մտավորականության և զարգացող վաճառականության ձգտումները: Հրատարակել է տեղեկություններ Արևմտյան Եվրոպայի երկրների արդյունաբերության, առևտրի, գիտության և տեխնիկայի նվաճումների վերաբերյալ: Տպագրել է նաև ուսումնական, ինչպես և գրական-գեղարվեստական գործեր: Նշանակալի դեր է ունեցել աշխարհաբարի զարգացման, նաև արևմտահայ գրական լեզվի մշակման գործում:

1887 թվականը շրջադարձային է միաբանության տարեգրության էջերում: Վիեննայում հիմնադրվում է տեղի Մխիթարյանների «Հանդես ամսօրյա» հայագիտական ամսագիրը: Մինչև 1911 թ. այն եղել է բարոյական, ուսումնական, արվեստագիտական ուսումնաթերթ: Ապա՝ մինչև 1915-ը՝ ամենամսյա, ապա՝ երկամսյա, եռամսյա, վեցամսյա: Հիմնադիր խմբագիրն է Արսեն Այտրնյանը: Ամսագիրը մինչև 1894 թ. հիմնականում եղել է կրթադաստիարակչական, հանրագիտարանային բնույթի պարբերական: 1895-ից այն հրապարակել է միայն հայագիտական ուսումնասիրություններ: Դրանք հոդվածներ ու մենագրություններ են՝ նվիրված Հայաստանի և հայ գաղթավայրերի, հին, միջին ու նոր գրականությանը, հայերենի և իր բարբառներին, հայ հին ու միջնադարյան մատենագրությանը: Հանդեսն իր էջերում լավագույնս ներկայացրել է արվեստի, բժշկության, մշակույթի, բնագիտության հայ գործիչներին: Առաջին անգամ «Հանդես ամսօրյա»-ում են հրապարակվել հայ հին և միջնադարյան ձեռագրերի բնագրեր, ինչպես նաև եվրոպացի հայագետների ուսումնասիրությունների հայերեն թարգմանություններ:

Հանդեսում պարբերաբար լույս են տեսնում տարբեր երկրներում հրատարակված հայագիտական ուսումնասիրությունների մատենագիտությունները: «Հանդես ամսօրյա»-ի համարները հայագիտության համար անկորնչելի և բացառիկ արժեք ունեն, քանի որ աշխարհի գրեթե բոլոր հայագետները դրանցից են օգտվում: Շուրջ 250 անուն սպագրված նյութեր Մխիթարյանները «Ազգային մատենադարան» մատենաշարով հրատարակել են առանձին գրքերով:

Տարբեր ժամանակներում հանդեսը խմբագրել են Ա. Այտրնյանը, Ղ. Հովնանյանը, Հ. Տաշյանը, Գ. Գալեմքարյանը, Գ. Մեննիշյանը,

³² Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 176:

Վ. Մելիքսեդեկյանը, Թ. Կետիկյանը, Հ. Համբարյանը, Ն. Ակինյանը, Ա. Վարդանյանը, Հ. Ոսկյանը, Վ. Բնգիլիզյանը, Պ. Տեր-Պողոսյանը, Օ. Սեքուլյանը, Մ. Թովհայանը:

Օտարազգի հայագետներից «Հանդես ամսօրյա»-ին աշխատակցել են Հ. Հյուբշմանը, Ն. Մառը, Ա. Մեյեն, Ֆ. Մյուլերը, Հ. Պետերմանը, Ֆ. Մակլերը, Յո. Ֆրիդրիխը, Ֆ. Ֆեյդին, Ֆ. Նևը, Յ. Մարկվարտը և ուրիշներ:

Հայ և օտարազգի հայագետներից շատերն են անդրադարձել «Հանդես ամսօրյա»-ին, սակայն, մեր կարծիքով, դրանցում առավել անաչառն ու ճշմարիտը Հ. Աճառյանի տված բնութագիրն է. «Վիեննայի մեծագույն հայկական հաստատությունն է Մխիթարյանց վանքը, որ հիմա հայ բանասիրության կենտրոնատեղին է դարձել, և ուր կը հրատարակվի հայոց ամենեն լուրջ թերթը՝ «Հանդես ամսօրյա» (հիմնված 1887-ին)»³³: Ավելի ուշ, իր հուշերը գրելիս մեծանուն հայագետը դարձյալ անդրադարձել է վերը հիշատակված պարբերականին. «Այդ միջոցին Վիեննայի Մխիթարյան միաբանության կողմից սկսել է հրատարակվել «Հանդես ամսօրեայ» ամսագիրը, հայագիտական մի ամսաթերթ, որ մինչև այսօր իր մրցակիցը չունեցավ հայ իրականության մեջ»³⁴:

Օտարազգի հայագետներից «Հանդես ամսօրյա»-ի մասին բերում ենք Հ. Աճառյանի ուսուցչի, ֆրանսիացի ականավոր լեզվաբան Ա. Մեյեի կարծիքը. «1887-ին նրանց հիմնադրած հանդեսը երբեք չի դադարել եվրոպական գիտության և բուն հայկական բանասիրության միջև միջակա օղակի դերը կատարելուց»³⁵:

Հասկանալի պատճառներով, Խորհրդային Հայաստանում ստեղծագործող հայագետներից ոչ բոլորն են աշխատակցել «Հանդես ամսօրյա»-ին: Եղել են, սակայն, համարձակները. Հ. Աճառյան, Մ. Աբեղյան, Թ. Ավդալբեկյան, Վ. Առաքելյան, Հ. Մանանդյան, Մ. Մինասյան, Ա. Թովհյան:

Հայկական հին դրամների ուսումնասիրման գործում կարևոր և վճռորոշ ներդրում ունեն Վիեննայի Մխիթարյան միաբանները: 1842-ից հիշյալ միաբանության անդամ Կղեմես Միպիլյանը (1824–1878) շրջագայելով Հայաստանի, Անդրկովկասի, Պարսկաստանի, Փոքր Ասիայի, Միջագետքի, Կիլիկիայի մի շարք վայրերում, հավաքել, դասդասել և ուսումնասիրել է հայկական դրամներ, ինչպես նաև դրամագիտական նյութեր: Առաջին անգամ մշակել, դասակարգել ու ժամանակագրել է 3000 կիլիկյան դրամ, ինչը դարձել է Կիլիկիայի հայկական դրամների վերաբերյալ հետագա հետազոտությունների հիմնաքարը³⁶:

1919 և 1960 թթ. Վիեննայում լույս է տեսել Հակոբոս Տաշյանի «Արշակունի դրամներ» մեծարժեք ուսումնասիրությունը, որտեղ, ըստ դրամների և գրավոր աղբյուրների, տրվում են արժեքավոր տեղեկություններ հայ - պարթևական հարաբերությունների մասին: Իր երկու

³³ Հ. Աճառյան. Հայ գաղթականության պատմություն, էջ 194: Հարկ է նշել, որ 19-ամյա Հ. Աճառյանն իր գիտական առաջին երախայրիքը հրապարակել է հենց այս ամսագրում (Քանի մը դիտողությունք (Երիշեի պատմության մի աղբյուրի առթիվ). – «Հանդես ամսօրյա», 1895, թիվ 8, էջ 231-232):

³⁴ Հ. Աճառյան. Կյանքիս հուշերից, էջ 104:

³⁵ Journal Asiatique, 1912, № 10, p. 171.

³⁶ Կ. Միպիլեան. Դասադրութիւն Ռուբինեան դրամոց, Վիեննա, 1892:

հիմնարար ուսումնասիրություններով³⁷ Օ. Սեքուլյանը հարստացրեց հայ դրամագիտության պատմության էջերը:

Անանց է Վիեննայի Մխիթարյանների նպաստը հայերեն գիտական տերմինաշինության բնագավառում. «Մխիթարյան զույգ կենտրոններում կատարված բառաստեղծման հսկայական աշխատանքի վկաներն են այսօր այն գիտական ընդհանուր ու ճյուղային բառարանները և բնական գիտությունների վերաբերյալ, թարգմանական և ինքնուրույն աշխատությունները, որոնք հրատարակվել են Վենետիկում և Վիեննայում»³⁸:

Հայերեն բնագիտական շատ տերմինների այսօրվա մեր ունեցածը մեծապես պարտական ենք Մխիթարյաններին և, հատկապես, Հ. Տաշյանի՝ այդ բնագավառում լույս ընծայած կոթողային աշխատությանը³⁹:

Հայկական հնագրության, որպես տեսական գիտաճյուղի, հիմնադրույթները կյանքի են կոչվել Հ. Տաշյանի նախաձեռնությամբ և տքնաջան պրպտումների արդյունքում: 1898-ին Վիեննայում լույս է տեսել վերջինիս «Ակնարկ մը հայ հնագրության վրա» կոթողային աշխատությունը, որի էջերում առաջին անգամ քննարկված և լուսաբանված են V–XVIII դդ. հայերեն գրերի տեսակները, դրանց անվանումների պատմությունը, թվագրման ու կիրառման ժամանակը: Մեծ ուշադրություն է նվիրված կրկնագրերի, կետադրության նշանների, ինչպես նաև հայ հնագրության տարաբնույթ այլ հարցերին: Անվերապահորեն կարելի է հավաստել, որ հայերեն գրերի տեսակների վերաբերյալ Հ. Տաշյանի դասակարգումն այսօր էլ ընդունվում է իր գիտական հզոր կովաններով:

Հ. Տաշյանը վերը հիշատակված իր աշխատության էջերում հերքեց Հայոց աշխարհում եգիպտական ծագմամբ գրելանյութի՝ պապիրուսի գործածության իրողությունը: Գերմանացի լեզվաբան Հ. Շուխարդտը (1842–1927) Եգիպտոսում իր հայտնաբերած հունարեն մի պապիրուսի հայատառ լինելու հանգամանքը պարզելու համար, այն հանձնում է ֆրանսիացի հայագետ Օ. Կարիերին (1832–1902): Չկարողանալով պարզել պապիրուսի ինքնությունը, Կարիերը դիմում է Հ. Տաշյանին, խնդրո առարկային լուծում տալու համար: Հ. Տաշյանը, ուսումնասիրելով պապիրուսը, հանգում է հետևյալին. «Նախ ոչ թե Հայոց աշխարհեն կգտնվի այս, այլ՝ հեռու աշխարհէ մը, Եգիպտոսեն՝ պապիրուսի գյուտերու հայրենիքեն: Երկրորդ՝ ոչ մագաղաթ, ոչ այլ հին թուղթ է նյութը, այլ՝ եգիպտական պրտու, կամ՝ պապիրուս, գրության նյութը, որում Հայոց մեջ գործածված ըլլալուն որևէ նշան չունեինք: Եվ երրորդ՝ հայերեն տառերով է, բայց ոչ հայերեն լեզվով, այլ՝ հունարեն»⁴⁰:

Վիեննայում հիմնադրվելուց կարճ ժամանակ անց Մխիթարյան միաբանները հոգացել են հայկական կրթօջախներ հիմնելու խնդրով: Պետականության բացակայության պայմաններում նրանք, հետևելով Վենետիկի

³⁷ Օ. Սեքուլյան և Վիեննայի Մխիթարյան թանգարանի Կոստանդին Գ-ի, Լևոն Ե-ի դրամները, Վիեննա, 1971, նույնի՝ Դրամագիտական պրպտումներ, Հեթում Բ., Լևոն Գ. և Աւշին, Վիեննա, 1982:

³⁸ Ռ. Բ շ ի ա ն յ ա ն. Ակնարկ հայերենի տերմինաշինության, Երևան, 1981, էջ 16:

³⁹ Հ. Տաշյան. Բառախոսական դիտողություններ հայերեն գիտական լեզվի մասին, Վիեննա, 1926:

⁴⁰ Հ. Տաշյան. Ակնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1898, էջ 93:

Մխիթարյան միաբանության իրենց գործընկերներին, մեծ թվով տարաբնույթ կրթօջախներ են բացել հայաշատ բնակավայրերում: Վիեննայի Մխիթարյանները Թուրքիայից ու այլ երկրներից հավաքագրել են հայ երեխաներ և 1820-ին Վիեննայում կյանքի կոչել գիշերօթիկ դպրոց, որը տարիներ անց վերափոխվեց միջնակարգ դպրոցի՝ լիցեյի: Վիեննայի Մխիթարյանները «Դպրոցներ են բացել նաև Ջոնոնիայում (1846 թ., որը գոյատևել է մինչև 1922 թ.), Տրիեստում (1858–1875 թ.), Կոստանդնուպոլսում (1870 թվականից): Վիեննայի Մխիթարյանների այս դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվել հայագիտական առարկաների և լեզուների դասավանդմանը: Ուստի պատահական չէ, որ Մխիթարյան դպրոցներում սովորողներն անխտիր տիրապետում էին մի քանի լեզուների: Այդ դպրոցները լավագիտակ շրջանավարտներ են տվել մանավանդ հայերեն լեզվի և մատենագիտության գծով»⁴¹:

Մանկավարժության բնագավառում Վիեննայի Մխիթարյանների ծավալած բեղմնավոր գործունեության հարցերին է անդրադարձել Շ. Ոսկանյանն իր ուսումնասիրություններից մեկում⁴²:

Մխիթարյան միաբանությունը իր Վենետիկի և Վիեննայի մասնաճյուղերով, XVIII դ. երկրորդ կեսից մինչև XX դ. առաջին քառորդն իր ստեղծած բնագիտական վիթխարածավալ մնայուն արժեքներով մեծապես հարստացրել ու զարգացրել է հայ բազմադարյան բեղմնավոր բնագիտական միտքը: Այս իմաստով արժե վկայակոչել Ա. Զաքարյան-Բռեհենեսիկների տված դիպուկ բնութագրումը. «Մեր մատենագրության Ոսկեդարյան շրջանից եկող «Արտաքին» անվանվող բնական գիտությունների նոր վերածնունդը հայ իրականության մեջ պայմանավորված է Մխիթարյանների գործունեությամբ»⁴³:

Վիեննայի միաբանության լույս ընծայած բնագիտական աշխատությունների մի մասը գիտական ծանրակշիռ ուսումնասիրություններ են, որոնք լիովին ապահովում են տվյալ ժամանակահատվածի գիտության համապատասխան մակարդակը: Սրանց մեջ կան նաև որոշակի նպատակաուղղվածությամբ գրված դասագրքեր: Բնագիտական աշխատությունների մի մասը, ունենալով հանրամատչելի բնույթ, ժամանակին լիովին բավարարել է ընթերցող լայն զանգվածների գիտական հետաքրքրությունները: Բնագիտական այդ աշխատությունները գրված են և՛ գրաբարով և՛ աշխարհաբար արևմտահայերենով: Վիեննայի Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության մասին ընդհանուր գաղափար կազմելու համար կարելի է բերել հետևյալ վկայությունը. «Եվրոպա» և «Հանդես Ամսօրյա» պարբերականներում մինչև XX դարի սկիզբը միայն աստղագիտությանը նվիրված հոդվածների թիվը շուրջ 60 է⁴⁴:

⁴¹ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 174:

⁴² Շ. Ոսկանյան, Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական պատմության, Երևան, 1999, էջ 316-333:

⁴³ Ա. Զաքարյան - Բռեհենեսիկ եր. Մխիթարյան բնագիտությունը և «Բազմավեպի» առաջին շրջանը. – Էջմիածին, 2003, Գ-Դ, էջ 126:

⁴⁴ Բ. Թուրանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 114-116:

Ուշագրավ է Արսեն Այտրնյանի՝ 1850 թ. Վիեննայում պատրաստված հայ իրականության մեջ հայատառ առաջին գլոբուսը: Հիշյալ գլոբուսից Հայաստանում կա մեկ հատ, որն այժմ Երևանի պետական համալսարանում է: Երկրորդ օրինակը, որը էջմիածնում է, քայքայված է: Թիֆլիսում միայն Ներսիսյան դպրոցն է ունեցել այդ գլոբուսից:

Վիեննայի Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության հարցերին են անդրադարձել Ն. Ակինյանը⁴⁵, Բ. Թումանյանը⁴⁶, Ա. Փաշայանը⁴⁷ և ուրիշներ:

Հիմնադրման առաջին իսկ օրվանից Հայոց պետականության բացակայության պայմաններում Վիեննայի Մխիթարյանները իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին հնարավոր բոլոր միջոցներով Եվրոպային ճանաչել տալ հայությանը և հայությանը՝ Եվրոպային:

МХИТАРИСТЫ ВЕНЫ–ПРОВОДНИКИ
НАУКИ И КУЛЬТУРЫ
(К 200-летию конгрегации)

АСАТУР ПАШАЯН

Р е з ю м е

В 1811 г. 18 священнослужителей во главе с Аствацатуром Бабикином из Венецианской конгрегации мхитаристов, через 38 лет после обоснования в Триесте, создали конгрегацию в Вене. Со времени основания и по сей день помимо духовно-религиозной Венская конгрегация ведет и плодотворную научную деятельность на академическом уровне. Благодаря усилиям венских мхитаристов – А. Айтиняна, Т. Торняна, М. Гарагашяна, Ов. Гатерджяна, Г. Овнаняна, А. Ташяна, В. Чалахяна, С. Дервишяна, О. Секуляна, А. Воскяна, Г. Меневишяна, Г. Галемкяряна, К. Сибиляна и других – арменоведение обогатилось фундаментальными, не потерявшими своего научного значения поныне трудами в области критического языковедения, историографии, нумизматики, источниковедения, кодикологии, армянской научной терминологии, палеографии. Основанный конгрегацией в 1887 г. журнал «Андес Амсория» – стал весомым вкладом в арменоведение. В 1850 г. членом конгрегации Арсеном Айтиняном в Вене был создан первый глобус на армянском языке. Венская конгрегация способствовала также созданию образовательных центров в населенных армянами местах.

⁴⁵ Ն. Ակինյան. Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա:

⁴⁶ Բ. Թումանյան. նշվ. աշխ., էջ 34–87:

⁴⁷ Ա. Փաշայան. 19-րդ դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում, Երևան, 1992, նույնի՝ Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում.– Բազմավեպ 2001, 1-4, էջ 333-350, նույնի՝ Հայր Գրիգորիս Գալեմքյարյանի բնագիտական աշխատությունները.– Էջմիածին, Է-Ը, էջ 126-131, նույնի՝ Գաբրիել Մենեվիշյանը՝ նաև բնագիտական աշխատությունների հեղինակ.– Զանդես ամսօրյա, 2000, -1-12, էջ 337-348: